Հավելված 1

Ավտովարկավորման պայմաններին և սակագներին

Եկամուտների կազմը և դրանց կշիռները		
	Եկամուտների տեսակներ	Կշիռ
Առաջնային եկամուտներ		
1	Աշխատավարձ, կամ դրան հավասարեցված վճարներ /պարգևավճար և այլն/	100%
2	Սեփական ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացվող ՀՀ հարկային մարմիններ ներկայացվող փաստաթղթերով հիմնավորված եկամուտը /շահույթը/	100%
3	Կենսաթոշակ՝ երկարամյա ծառայության (Ոստիկանության, Պաշտպանության նախարարության, Քրեակատարողական և այլ համապատասխան մարմինների աշխատակիցներ, մանկավարժներ, դատավորներ և այլն), կերակրողին կորցնելու և այլն (բացառությամբ տարիքային և հաշմանդամության կենսաթոշակի)	100%
4	Առնվազն մեկ տարվա ընթացքում վճարովի աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցում, որը հիմնավորվում է համապատասխան պայմանագրով և քաղվածքով	100%
5	Վարձակալությունից ստացված եկամուտ, որը հիմնավորված է Բանկում գործող պայմաններով՝ - առկա է օրենքով սահմանված կարգով կնքված վարձակալության պայմանագիր, որը վարկային հայտի ընդունման պահին կնքված է եղել առնվազն 6 ամիս և փոխանցումների ստացման փաստ (ներառյալ վերաձևակերպումները), - կամ գոյություն ունի փաստացի վարձակալության պայմանագիր և բանկային հաշվին փոխանցումների ստացման փաստ /նվազագույնը 8 ամիս/ (ներառյալ վերաձևակերպումները):	100%
Երկրորդային եկամուտներ		
6	Վերջին հաշվետու տարվա ընթացքում վարկառուի ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ, որոնք հիմնավորված չեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերով, սակայն հիմնավորված են ներքին հաշվառման փաստաթղթերով՝ եթե ձեռնարկատիրական գործունեության վերլուծությունը իրականացվել է Բանկի համապատասխան ստորաբաժանման կողմից	60%
7	Արագ դրամական փոխանցումներից ստացված, Բանկում գործող պայմաններով հիմնավորված, եթե դրանք կատարվել են վերջին 6 ամիսների ընթացքում ամեն ամիս կամ վերջին 12 ամիսների ընթացքում նվազագույնը 10 ամիս հաճախականությամբ, ընդ որում՝ վերջին ամսվա ընթացքում փոխանցման առկայությունը պարտադիր է:	60%